

## I.

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Եւ

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ.

Խաղ եւ զբաղմունք, մանկ սպարսեկ եւ գպրոց փոքրիկ երեխաների.

## Մանկական խաղերը.

Խաղը մանկական կեանքի գլխաւոր բովանդակութիւնն է կազմում: Դպրոցական ճնշումը դեռ ևս չճաշակած մանուկն ամբողջովին անձնատուր է լինում նրան, բայց անձնատուր է լինում ոչ թէ որ և է արտաքին պատճառի դրդմամբ, այլ իր ներքին, բնական ձգտումովը:

Հոգեբան Վոլենդը խաղն անուանել է աշխատանքի դուստր. սակայն աւելի ճիշտ կլինէր, ընդհակառակը, աշխատանքն անուանել խաղի դուստր, որովհետև խաղն է մանուկի առաջին և սիրած զբաղմունքը, որին նա վերաբերուում է կատարեալ լրջութեամբ:

Յայտնի է, որ իւրաքանչիւր անհատի էութեան խորքերում մայր բնութիւնը գրեթէ մի կենսունակ ձգտում—ձգտումն շարժուելու, գործելու, մի բան անելու: Եւ խաղն է այն սքանչելի միջոցը, որ հնարաւորութիւն է տալիս մանուկին իր այդ բնական ձգտումը նպատակայարմար ձևով արտայայտելու:

Խաղը մանուկի համար այն չէ, ինչ որ հասակաւորի համար: Մինչդեռ վերջինս համար խաղը միայն մի զուարճութիւն է, զեղեցիկ ժամանց, մանուկի համար—մի իսկական աշխատանք է նա:

Եթէ կամենանք մի փոքր խորաթափանց լինել մանկական խաղերի վերաբերմամբ, կտեսնենք, որ նրանք ոչ այլ ինչ են, եթէ միայն հասակաւորների արարքների ու զործողութիւնների նմանողութիւնը: Մանուկն իբրև մի փոքրիկ դերասան աշխատում է իր խաղերի մէջ նմանուել մեծերին և ցուցադրել նրանց:

Ընդհանուր առմամբ դա ճշմարիտ է և ապացուցուում է թէկուզ նրանով, որ փոքրահասակ տղաներն իրենց խաղերի մէջ նմանուում են առաւելապէս տղամարդկանց, իսկ աղջիկները՝ իրենց սեռին պատկանող հասակաւորներին: Այսպէս օրինակ, աղջիկները սիրում են տիկնիկներ, սիրում են դայնաւիկութիւն անել նրանց և ամեն բանում աշխատում են նմանուել իրենց մօրը կամ քոյրե-

րին, այն ինչ տղաները բոլորովին այլ տեսակ խաղերով են հետաքրքրուում:

Անկասկած, խաղերի մէջ եղած այս տարբերութիւնը մի կողմից ապացոյց է սեռերի ներքին տարբերութեան, իսկ միւս կողմից՝ նա կարող է ծառայել որպէս ամենագեղեցիկ ապացոյց դաստիարակութեան, մինչև անգամ մանկական դարդացման առաջին աստիճաններում: Անհերքելի փաստ է, որ չի կարելի զանազան միջոցներով երեխային դէպի խաղը անտարբեր դարձնել, ինչպէս և չի կարելի նրա ցանկութիւններին ու տրամադրութեանը չհամապատասխանող խաղը ստիպմամբ սիրել տալ նրան:

Ահա թէ ինչու խաղերը մենք համարում ենք նաև դաստիարակութեան ուղեցոյց:

Յատուկ ուշադրութեան է արժանի երեխաների մէջ նկատուած հետեւեալ հակումը — խաղերի մէջ նրանք ընդհանրապէս սիրում և գերադասում են այն առարկաները, որոնք հանդիսանում են որպէս խորհրդանշան (սիմվոլ) իրենց երևակայութիւնն զբաղեցնող նիւթերի:

Դա ևս մի կարևոր հանգամանք է, որ իր հերթին գալիս է ապացուցանելու խաղերի դաստիարակչական նշանակութիւնը:

Զպէտք է մոռանալ նմանապէս, որ խաղերը զարգացնում են մանուկի ինքնագործունէութիւնն ու ստեղծագործական կարողութիւնը, սրում են նրա երևակայութիւնը և զօրացնում բանաստեղծական ձիրքը: Այն, խաղի ժամանակ նա ստեղծագործում է որպէս իսկական արուեստագէտ: Աւազի կոյտը նրան պատկերանում է որպէս մի հպարտ ամբողջ, իր ատամնաւոր պարխապներով: Փայտի կտորտանքը նրա համար քայլում են, ինչպէս ամենալաւ զէնքերով զինուած զօրքեր: Նա իրեն երևակայում է շոգենաւկամ շոգեկառք, նայած թէ դրանցից որի մտասպառկերը աւելի կենդանի է իր յիշողութեան մէջ: Փոքրիկ աղջիկը լաթերով բարութում է փայտի հասարակ կտորը և նրա մէջ դնում իր սեպհական հոգին, զգացմունքներն ու ցանկութիւնները: Նա դարձնում է իր այդ տիկնիկը երբեմն մի հպարտ իշխանուհի, երբեմն մի թշուառ մուրացկան և աշխարհիս ոչ մի բարիքի հետ չի փոխարինի նրան:

Թերևս տարօրինակ թւի, եթէ ասենք, որ մանկական այդ երևակայութիւնը անհամեմատ բարձր է բանաստեղծի կամ արուեստագէտի երևակայութիւնից: Սակայն եթէ ի նկատի ունենանք, որ սրանք աւելի շատ են կաշկանդուած ժամանակի, տարածութեան, նիւթի և ձևի օրէնքներով, այն ժամանակ տարօրինակութիւնը ինքն ըստ ինքեան կվերանայ մէջտեղից:

Խաղերի ունեցած դաստիարակչական մեծ նշանակութիւնից

բղխում են մի քանի կարևոր դրութիւններ այն մասին, թէ ինչպիսի խաղալիքներ պիտի տալ երեսաների ձեռքը:

Կասկած չկայ, որ այդ տեսակէտից ամենից նպատակայարմարը պարզ խաղալիքներն են: Որքան վարպետօրէն է շինուած խաղալիքը, որքան շատ է նման նա իրեն օրինակ ծառայող առարկային, այնքան էլ ստոր է նրա մանկավարժական արժէքը, որովհետև այդպիսի խաղալիքը շատ քիչ տեղ է թողնում երեսայի ստեղծագործական երևակայութեան համար:

Պէտք է խուսափել թանգարժէք և շքեղ խաղալիքներից, որոնցով այնքան հարուստ են մեր խանութները: Թո՛ղ լինի խաղալիքը պարզ, աժան, բայց հարազատ գեղարւեստի պահանջներին: Այս պահանջը կարևոր է նաև մի այլ տեսակէտից:—Անհրաժեշտ է, որ երեսան հնարաւորութիւն ունենայ հարկաւոր դէպքում կոտրելու իր խաղալիքները, բայց իհարկէ, ո՛չ թէ կոտրուելու և աւերելու վայրենի ցանկութեանը բաւարարութիւն տալու համար, այլ իրեն հետաքրքրող այս կամ այն հարցի պատասխանը կենդանի կերպով ստանալու նպատակով: Իսկ ընական է, որ թանգարժէք խաղալիքները, իրենց գնի պատճառով, կոտրել չի կարելի:

Միւս կողմից, մանուկի հոգին էլ պահանջում է, որ իրեն տրւած խաղալիքը լինի հասարակ և անպաճոյճ: Թերևս շատերը նկատած լինեն, որ նօրմալ և չայլասերւած երեսաները գերազասում են պարզ և կոպիտ խաղալիքները շքեղ տիկիւններից, կենդանիներից և երկաթուղիներից, որովհետև սրանք—շնորհիւ իրենց թանգութեան և շուտ կոտրուելու յատկութեան—պահանջում են նաև մի երկշտա զգուշաւորութիւն:

Մանկական խաղերի միւս նշանակութիւնն էլ այն է, որ նրանք յաճախ երևան են հանում ազագայ մարդու ստեղծագործական կարողութեան առաջին ընձիւղները: Ընդհանրապէս էլ շատ անգամ պէտք է որոնել մի խոր միտք: Զեմս Ուատտի մասին պատմում են, որ նա մի երևակայող երեսայ էր և աւանց ձանձրանալու ժամերով կարող էր նստել և դիտել, թէ ինչպէս եռացող ջրից բարձրացող գոլորշիները խփելով չրբխկչրբխկացնում են թէյամանի կափարիչը: Մենք էլ մեր երեսաների գործողութիւնների մէջ յաճախ կարող ենք նկատել հետախուզութեան նոյն ոգին, թէպէտ հասկանալի է իհարկէ, որ ամեն մի երևակայող մանուկ Զեմս Ուատտ չի լինի:

Ուղերի մասին ընդհանրապէս տարածւած է այն կարծիքը, թէ նրանք նպաստում են մարդու միմիայն ֆիզիքականի զարգացման: Բայց այդ կարծիքը թերի է: Ուղերը զարգացնում են

չէ թէ միայն խաղացողի մարմինը, այլ և հոգին, որովհետև նրանք մարդու մեջ են մարդու բոլոր գործարանները—մասնաւորապէս ձեռներն ու աչքը, զարգացնում են մարմնի ոյժն ու ճկունութիւնը: Իսկ այդ ամենը անհրաժեշտ է և՛ հոգեկան զարգացման տեսակէտից, որովհետև հոգու զարգացումը պայմանաւորուած է ամենամեծ չափով մարդու արտաքին զգայարանների ու գործարանների զարգացմամբ:

Բացի դրանից, խաղերը զարգացնում են մարդու միտքը նրանով, որ տալիս են շատ կարևոր գիտելիքներ զբախ աշխարհի առարկաների մասին, գիտելիքներ, որ ձեռք են բերում համարեաւ անանց անսնձին աշխատութեան, բայց մեծ բաւականութեամբ: Օրինակ, ինչպիսի մեծ փորձառութիւն է պարզեւում մանուկներին նրանց ամենասիրելի խաղալիքներից մինը—ջուրը, որը անանց ձանձրացնելու, ժամերով ու օրերով կարող է զբաղեցնել նրանց և միևնոյն ժամանակ մատչելի է մինչև անգամ ամենաչքաւորներին: Նոյնը կարելի է ասել նաև աւտոյի մասին, որը երեխաների համար նոյնպիսի մի անփոխարինելի խաղալիք է. բայց, դժբախտաբար, նրա բազմազան գործադրութիւնները հարկաւոր չափով տակաւին գնահատուած չեն մանկավարժութեան կողմից:

Մանկական խաղերը և նրանց գործած ազդեցութիւնը դեռ ևս այնքան էլ ուսումնասիրուած չեն: Այդ է պատճառը, որ մինչև այժմ հնարաւոր չի եղել ճշգրիտ սահմանել խաղերի դաստիարակչական բնաւորութիւնը, ինչպէս նաև նրանց նշանակութիւնը մանուկի հոգու և մարմնի, մասնաւորապէս երեակայութեան, զարգացման տեսակէտից: <sup>1)</sup> Սակայն և այնպէս, ընդունւած ճշմար-

<sup>1)</sup> Պարստը գանգատում է, որ Գերմանական մանկավարժական գրականութեան մէջ չկայ դեռ եւս մի այնպիսի աչքի ընկնող երկասիրութիւն, ինչպիսին է Ամերիկացի Ջոնսօնի «դաստիարակութիւն խաղերի միջոցով» գիրքը: Նա ցու է յայտնում, որ ողջ Գերմանիայում տակաւին ո՛չ որ չի փորձել բոլոր յայտնի խաղերը հոգեբանական ճիշտ վերլուծութեան ենթարկել, դրա հետ միասին տալով նաև մարդաբանների ու պատմաբանների համեմատական հետազօտութիւնները նրանց մասին, որովհետեւ զլիսաւոր խաղերի պատմութիւնը շատ խոր հնութիւնից է սկսում եւ նրանցից շատերը, բոլորովին նման ծեւերով, տարածւած են ո՛չ միայն եւրոպայում ու Ամերիկայում, այլ եւ հեռաւոր Չինաստանում, Եպպոսիայում եւ Հնդկաստանում:

Եթէ Գերմանական մանկավարժական գրականութիւնը, որ իբ հարստութեամբը առաջնակարգ տեղերից մէկն է բռնում բոլոր բազարակիրք երկրների մանկավ. գրականութիւնների մէջ, աղբատ է այդ կողմից:

տութիւն է համարուում այն, որ խաղերը—նամանաւանդ խմբական խաղերը—չսփառանք մեծ ազդեցութիւն ունին մանուկի ընտելութեան կազմակերպման վրայ: Նրանք զարգացնում են մանուկի պատասխիրութեան, պատասխանատուութեան և հաւատարմութեան զաղափարները, լուսաւորում են նրա ունեցած հասկացողութիւնները ճշտութեան և անճշտութեան մասին, դաստիարակում են նրանում համարձակութիւն և տոկունութիւն մի կողմից, իսկ միւս կողմից՝ կարեկցութիւն դէպի թոյլերը, անզօրները:

Բոլորովին իրաւացի է նկատում Սմայլսը, որ երեխան իր խաղի տարիներում աւելի շատ ծանօթութիւններ է ձեռք բերում արտաքին աշխարհի առարկաների և նրանց յարաբերութիւնների մասին, քան իր կեանքի մնացած շրջանում: Սրանից էլ հետևում է, որ խաղը իր իրաւունքները պիտի ունենայ ոչ միայն ընտանիքներում, խաղահրապարակներում, այլ և դպրոցներում, որովհետև խաղերը աւելի են զարգացնում մանուկի ներքին ոյժը—որը և մանուկի անհատականութեան տեսակէտից աւելի կարևոր է—քան դպրոցական գեղեցիկ ծրագրերն և օրինակելի դասատուութիւնները:

### Խաղ և աշխատանք.

Երեխան խաղի և աշխատանքի միջև հակադրութիւն չի տեսնում, որովհետև խաղին էլ նա վերաբերում է լրջութեամբ և նրա մէջ դնում իր ամբողջ հոգին: Բայց իսկապէս կայ տարբերութեան մի գիծ խաղի և աշխատանքի մէջ.—խաղը և խաղալը կախւած է խաղասողի ազատ կամքից, իսկ աշխատանքը—շատ անգամ—ոչ. աշխատանքը սովորաբար կատարում է որ և է արտաքին հանգամանքի թիւադրանքով:

Իսկական դաստիարակչական արեւստը պէտք է խաղին վերաբերուի համապատասխան լրջութեամբ, որովհետև—ինչպէս տեսանք—խաղը ոչ այլ ինչ է, բայց եթէ կարևոր արտայայտութիւն դէպի գործունէութիւնն ունեցած մանկական ձգտումի:

Դաստիարակչական տեսակէտից նաև անհրաժեշտ է, որ խաղից դէպ աշխատանքը եղած անցումը լինի այնպէս, որ մանուկը աշխատանքն ևս կատարի ոչ պակաս սիրով ու եռանդով, քան խաղը:

ապա ուրեմն, որքան աննախանձելի վիճակի մէջ են դտնում մանկական խաղերն ու նրանց ուսումնասիրութիւնը միւս երկրներում: Հայկական մանկավարժական գրականութեան մասին խօսք լինել չի կարող:

Այստեղից հարց է ծագում, թէ ինչպիսի զբաղմունքներ պէտք է ընտրել, որ համապատասխանեն մանուկի այս կամ այն հասակին: Փոքրահասակ երեխաների համար առաջնակարգ տեղը բռնում է.—

### Կաղապարումն. <sup>1)</sup>

Իբրև այդպիսի մի մանկական զբաղմունք ամենից առաջ պէտք է յիշել փափուկ կաւից կամ սլաստիլինից զանազան իրեր պատրաստելը: Մանկանոցների գործածութեան համար աւելի յանձնարարելի է սլաստիլինը,<sup>2)</sup> որ արհեստականօրէն պատրաստուած զանազանագոյն մի զանգւած է, որովհետև նա փոշի չի տալիս և հեշտութեամբ էլ ամեն ձև ընդունում է:

Սակայն աղնիւ ամանների կաւը նոյնպէս իր առաւելութիւններն ունի. աժան է—մէկ, խնամքով գործադրելու դէպքում՝ մաքուր է—երկու, և փրակակար չէ աւողջութեանը—երեք:

Պէտք է նկատել նաև, որ այդ աշխատանքների համար գործիքներ համարեն հարկաւոր էլ չեն. ամենալաւ գործիքը երեխայի մատներն են, որ տւել է ինքը բնութիւնը: Եթէ անդրիագործների զլխաւոր գործիքը նրանց մատներն է, ապա ուրեմն մանկական աւելի պարզ աշխատանքների համար նոյն այդ գործիքը զերազանց կարող է լինել:

Մի նոր հարց ևս. ինչ և ինչպիսի առարկաներ պէտք է կաւից կամ սլաստիլինից պատրաստել, որ երեխայի գործ զրած աշխատանքը լինէր—դաստիարակչական տեսակէտից—արդիւնաւէտ և օգտակար:

Այդ հարցին ամենալաւ պատասխանը տալիս է բնութիւնը:

Փաստ է, որ երեխաները—եթէ իրենց ազատ կամքին են թողնուած և որ և է ճնշում չկայ վրանին—սիրում են շինել իրենց հետաքրքրող առարկաները և մի առանձին ոգևորութեամբ են կատարում դրա համար հարկաւոր աշխատանքները: Նրանք շատ սիրում են ցեխից կամ կաւից շինել և կամ հողի, աւազի մէջ կաղապարել, օրինակ, ձու, տանձ, խնձոր, բալ, ծիրան և այլն:

Դաստիարակին մնում է միայն օգտւել երեխայի այդ բնական ձգտումից, որովհետև անբռնադատ խաղից մինչև այդօրինակ աշխատանքը—ընդամենը մի փոքրիկ քայլ է միայն: Եւ այդպիսի աշխատանքը կլինի անպայման օգտաշատ, որովհետև և նպատակայարմար է նրա ընթացքը և համեմատ Պեստալօցցիի այն իրա-

1) Այդպէս թարգմանում ենք ռուս. «ЛѢПКА» բառը:

2) Նշանաւոր է Պօկտօր Վ. իլինի մի գործարանը Լայպցիգում:

ւացի պահանջին, որ ասում է, թէ «իւրաքանչիւր ուսուցումն, իւրաքանչիւր դասաւանդութիւն պիտի լինի միայն մի արւեստ՝ օժանդակելու մանուկի մէջ բնութիւնից դրւած ինքնազարգացման ձգտումին»:

Սակայն այստեղ, փազազծերի մէջ, ընթերցողի ուշադրութիւնը մենք պիտի հրաւիրենք հետեւեալ կարևոր հանգամանքի վրայ:

Անշուշտ սկզբում մանուկներից միմիայն շատ քչերը կը կարողանան կաւից կամ պլաստիլինից քիչ-շատ յաջողութեամբ դուրս բերել որպէս օրինակ իրենց տրուած առարկաները: Դա երեխայի համար շատ դժւար է, բայց այդ դժւարութեանը չըպէտք է այնքան էլ մեծ նշանակութիւն ընծայել: Մինչև իսկ հասակաւորների համար էլ հեշտ չի լինի, եթէ փորձեն առանց նախապատրաստութիւնների կաւից շինել մի բան այնպէս, որ նման լինէր բնազդին: Հետեւաբար, երեխայից չպիտի շատ բան պահանջել, պէտք է բաւականանալ նրա տւած անկատար արդիւնքովը, որովհետև անտեղի պահանջկոտութեամբ կարող ենք վհատեցնել նրան: Հերիք է, եթէ աշակերտը գիտակցում է, որ աշխատանքը կատարել է ինքը իր սեպհական ոյժերով: Անկատար, բայց ինքնուրոյն աշխատանքն աւելի բարձր, աւելի գնահատելի է, քան կիսով չափ մեծերի օգնութեամբ գլուխ բերուած կատարեալ աշխատանքը:

Մբանից—անկասկած—չպէտք է բնաւ եզրակացնել թէ հարկաւոր չէ, ուրեմն, ուսուցանել երեխային, ղեկավարել, առաջնորդել նրան: Դաւ լիցի: Մենք պահանջում ենք, ընդհակառակը, որ անհրաժեշտ է սովորեցնել նրան թէ ինչպէս պէտք է յաղթահարել գործի մէջ իրեն հանդիպող դժւարութիւնները. այլ խօսքով, մենք պահանջում ենք՝ զարգացնել ուղիղ սեսնելու ընդունակութիւնը աշակերտի մէջ: Պէտք է սովորեցնել նրան ուղիղ տեսնել և ուղիղ ըմբռնել այն բազմաթիւ մանրամասնութիւններն ու առանձնայատկութիւնները, որ յատուկ են բնութեան նոյն իսկ ամենապարզ մարմիններին:

### Ուղիղ սեսողութիւն.

Սովորաբար ենթադրուում է, թէ այս բանում մեծերը փոքրերի համեմատութեամբ որոշ առաւելութիւններ ունեն. բայց այդ սխալ է: Ընդհանրապէս փոքրերը տեսնում են աւելի շատ և աւելի ուղիղ, քան մենք կարծում ենք, նամանաւանդ այն փոքրերը, որոնց տեսողութիւնը դեռ ևս բթացած չէ մեքենայական ընթերցման սովորութեամբը և տպագրական տառերի խառնաշփոթու-

թեամբը: Իսկ նրանց շատ անգամ զարմանալի հարցերը երևոյթների պատճառի ու նպատակի մասին անհերքելիօրէն ապացուցանում են այն իրողութիւնը, որ նրանք նախ և առաջ մտածում են իրենց տեսածի մասին, և երկրորդ՝ որ նրանք կատարւած փաստերի մէջ որոնում են պատճառական կապակցութիւն:

Դաստիարակը չպէտք է անուշադրութեան մատնի երեխայի այն գեղեցիկ ձգտումը, նա պէտք է կարողանայ նկատել և օգտագործել այն: Բայց դժբախտաբար, մեզանում այնքան էլ մեծ կարևորութիւն չի տրւում ուղիղ տեսնելու կարողութեանը, դրա համար էլ արհամարհւած է ուղիղ տեսնելու ուսուցումը: «Հարիւր հոգուց միայն մի հոգի կճարւի ուղիղ մտածող, իսկ ուղիղ տեսնող—հազարից մէկը»—ահա Ջոն Ռեօսկինի հոչակաւոր ասացւածքներից մինը: Ականաւոր անգլիացու կարծիքով «մարդու ուսուցման գլխաւոր նպատակը պիտի լինի սովորեցնել ուղիղ տեսնել և տեսողութեամբ ըմբռնածը՝ արտայտել»:

### Շօշափելիքի կարեւորութիւնը.

Արտաքին աշխարհի իրերն ու նրանց զանազան յատկութիւններն ուղիղ ըմբռնելու համար միայն տեսողութիւնը բաւական չէ. հարկաւոր է նաև շօշափելիքի օժանդակութիւնը: Դա ապացուցւում է մանկական հասակի վերաբերմամբ կատարուած փորձերով, այն հասակի, երբ մանուկի հոգում նոր-նոր սկսում են կազմակերպւել պատկերացումներ տարածութեան մասին:

Հէնց ինքը լեզուն էլ վկայում է, որ արտաքին աշխարհի մասին դատելիս ու մտածելիս գլխաւոր դերը պատկանում է ոչ թէ տեսողութեանը, այլ շօշափելիքին: Ուրիշ խօսքով, իրը կատարելապէս ճանաչելու համար միայն տեսնելը հերիք չէ, պէտք է նաև շօշափել, ըմբռնել այն (բռնել բայից, որ շօշափելու գործողութեան նախընթաց և անբաժան պայմանն է կազմում): Առանց շօշափելիքի մենք երբէք չէինք կարող ունենալ պայծառ և ուղիղ մտապատկերներ մեզ շրջապատող առարկաների և նրանց յարաբերութիւնների մասին, մինչդեռ միայն շօշափելիքով այն է՝ առանց տեսանելիքի օգնութեան—բոլորովին հնարաւոր է այդպիսին:

Կոյր ծնուածների կամ շատ վաղուց կուրացածների նկատմամբ կղած փորձերը ցոյց են տալիս, որ տարածութեան մասին նրանց ունեցած պատկերացումները պակաս յստակ և պայծառ չեն. քան ոչ-կոյրերինը:

Մարդու մտաւոր զարգացումը ամենամեծ չափով կախւած է ոչ թէ նրա բառապաշարից, ունեցած բառերի հարստութիւնից,

այլ յատակ, պարզ և ճիշտ մտապատկերների ներկայութիւնից: Բառը մտապատկերների արտայայտման նշանն է միայն. զարգացման տեսակէտից նա բոլորովին անարժէք մի բան է, եթէ շաղկապւած չէ որոշ մտապատկերի հետ:

Եւ որովհետեւ—ինչպէս արդէն տեսանք—շօշափելիքն է մտապատկերների կազմակերպման և պայծառութեան ամենագլխաւոր պայմանը, ուրեմն և սրանից հետևում է.—ա. մարդու մտաւոր—հոգեկան զարգացման համար անհրաժեշտ է շօշափելիքի զարգացումը, և բ. շարունակ պէտք է մաքաւել բառական դաստիարակութեան դէմ, որ այսօր մի զրաւիչ հեռանկար է հանդիսանում թէ տանը և թէ դպրոցում, պէտք է սահմանափակել բառերի տիրապետութիւնը յօգուտ մտապատկերների տիրապետութեան:

### Դիտողական ուսուցում.

Մտաւոր զարգացման տեսակէտից երեխաներին արտաքին աշխարհի իրերով զբաղեցնելը—որը իսկական դիտողական ուսուցումն է և կենդանի գործունէութեան աղբիւրը—անհամեմատ աւելի թանգ արժէ, քան գրքերով սովորելը: Մինչդեռ ժամերով նստած գրքով անգիր անելը սովորեցնում է մանուկին շմտածել, ձեռքի աշխատանքները—նոյն իսկ ամենապարզերը—ընդհակառակը, նրանից պահանջում են լարւած ուշադրութիւն և շարունակ ստիպում են մտածել: Բացի դրանից, իւրաքանչիւր ձեռարկեստ պահանջում է ֆիզիքական որոշ շարժողութիւն, որը մանուկի համար մի անհրաժեշտութիւն է և խիստ կարևոր նրա մարմնի զարգացման և առողջութեան տեսակէտից:

Ներկայ դպրոցի հասցէին ուղղւած բոլոր մեղադրանքներից թերևս ամենածանրն այն է, որ նա բացառապէս գրքի դպրոց է, տեսական, անմարմին գիտութիւններ—էն էլ՝ վաճ այն գիտութեան—հաղորդող մի անհրապոյր հիմնարկութիւն: Կարգ-կարգ շարւած նստարան-գրասեղանները, իրենց լուռ ներկայութեամբ, ասում են ամենքին, որ այնտեղ կարելի է միայն քարացած նստել և ականջներով ու աչքերով հաւաքել ուսուցչի և դասադրքերի տւած մեռած իմաստութիւնները: Կենդանի աշխատանքի, բազմազան ձեռարկեստների մուտքն այնտեղ արգելւած է խստիւ:

Չուտ տեսական կամ դասադրքային ուսուցումը ոչ միայն օգտակար չէ, այլ վնասակար է մանկական հասակում, որովհետև վերացական և անշօշափելի կիներով, մատչելի չէ երեխաների համար: Նա կանգնեցնում է աշակերտի մտածողական կարողութիւնը և ամբողջովին յիշողութեան վրայ ծանրանում: Եւ որքան շուտ է սկսւում այդպիսի ուսուցումը, այնքան էլ մեծ է նրա

հասցրած վնասները, որովհետև երեխայի տակաւին անզարգացած ուղեղի համար միակողմանի մտաւոր-տեսական մարզանքները սպանիչ են:

### Ձեռարեւոյր եւ ուղեղի զարգացումը.

Պէտք է խոստովանել, որ ձեռների գործունէութեան և մանկական ուղեղի զարգացման միջև եղած կապը իր մանրամասնութիւններով զեռ ևս այնքան էլ լուսարանւած չէ: Բայց և այնպէս, իբրև և մի անհերքելի ճշմարտութիւն, պիտի յիշատակել այն փաստը, որ ձեռքի իւրաքանչիւր վարժութիւնը ազդում է ուղեղի վրայ և թողնում վերջնիս վերնաշերտում հետքի նման մի բան: Այդ իսկ պատճառով, ձեռարեւոյր ուսուցումը, ամենից առաջ, մտաւոր դաստիարակութեան հզօրագոյն գործօններից մինը պէտք է համարել:

Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ ձեռքը մարդու վեցերորդ զգայարանն է, իսկ նրա գործունէութիւնը՝ դէպի ուղիղ զարգացումն տանող ճանապարհը:

Աշխատանքի մտաւոր և ֆիզիքական կոչւած տեսակների միջև նկատուող հակօտնեայ տարբերութիւնը հիմնւած է մոլորութեան վրայ, որովհետև աշխարհիս երեսին չկայ մի այնպիսի ձեռքի կամ ֆիզիքական աշխատանք, որը չպահանջէր մկանների լարման հետ միասին նաև մտքի լարումն: Ով ուզում է ձեռներով արագ և վարժ աշխատել, պէտք է ունենայ զարգացած ուղեղ: Թուլամիտը չի կարող օրինակելի վարպետ լինել, որովհետև թուլամտութիւնն ազդում է մկանների շարժումների վրայ այնպէս, ինչպէս ազդում է մտածողութեան և լեզուի վրայ: Եւ թէ ապուշի ձեռքը անընդունակ է հարկաւոր չափով ձկուն և արագաշարժ լինելու, դրա պատճառը ոչ թէ նրա ձեռքի բնախօսական պակասաւոր կազմութիւնն է, այլ ուղեղային վանդակիկների նւազ զարգացումը:

### Թուլամիտ երեխաներ.

Ուղեղի բնախօսութեան նորագոյն հետազօտութիւնները անհերքելիօրէն ասպացուցանում են ձեռների և ուղեղի զարգացման միջև եղած սերտ կապի գոյութիւնը: Այդ կապի ներկայութեան մասին համոզեցուցիչ ասպացոյցներ է տալիս և գործնական կեանքը: Սօսքս վերաբերում է թուլամիտ և յետամնաց երեխաների դաստիարակութեանը: Այդտեղ է, որ ձեռարեւոյր սիստեմատիկ ուսուցումը անժխտելիօրէն ասպացուցանում է իր հրաշագործ ազդեցութիւնը մտքի զարգացման վրայ:

### Ձեռքի զործուցելութիւնը եւ լեզւի զարգացումը.

Բալզամիսի տեսութեան համաձայն, լեզւի զարգացումը սերտորէն կապուած է աջ ձեռքի զարգացման հետ: Եւ ամենևին անհաւանական չէ այդ տեսութիւնը, որովհետև—ինչպէս յայտնի է—աջ ձեռքի ամբողջ ղեկավարութիւնը բղխում է ուղեղի ձախակողմեան կիսագնտից, իսկ այդ կիսագունտը հանդիսանում է լեզւական կենտրոնի բնավայրը: Լեզուի հետ կապուած բոլոր մտաւոր աշխատանքները—ինչպէս են՝ ընթերցանութիւնը, գրելը, համբանքը և այլն—կատարւում են նոյնպէս ուղեղային ձախ կիսագնտի թելագրումներով:

Սրանից արդէն հասկանալի է, թէ ինչպիսի մեծ ազդեցութիւն ունի ձեռքի աշխատանքը լեզւի զարգացման վրայ: Ձեռքի աշխատանքը զարգացնում է ձեռքը: Եւ քանի որ ֆիզիքական աշխատանքների ամենամեծ մասը մենք կատարում ենք սովորաբար աջ ձեռքով, հետևաբար դրանով աջ ձեռքը զարգացնելով, միաժամանակ զարգացնում ենք նաև մեր լեզւական ընդունակութիւնը, որովհետև աջ ձեռքի և լեզւի զարգացումը—ըստ Բալզամիսի տեսութեան—միևնոյն զործողութեան սկիզբը և վերջն է կազմում:

### Աննպասակայաբմար դասարաւելութիւն.

Վերոյիշեալի հիման վրայ ներկայ դպրոցական ուսուցումը, որ բաղկացած է առաւելապէս լեզւական վարժութիւններից, ազդում է միմիայն ուղեղային ձախ կիսագնտի վրայ: Թերևս դա է պատճառը—այն էլ՝ ամենագլխաւոր պատճառը—ժամանակակից աշակերտութեան «մտաւոր յոգնածութիւն» կոչուող հիւանդութեան, որ թեևատարած իշխում է այսօր բոլոր դպրոցներում:

Թէ որքան աղէտաբեր է այդ հիւանդութիւնը—դրա մասին չէ խօսքը, որովհետև ոչ ոքից ծածուկ չեն նրա զործած աւերմունքները: Սօսքը նրա դէմ մաքառելու մասին է: Այդ պարտականութիւնը, ամենից առաջ, ծանրանում է դպրոցի վրայ. նա պէտք է կուի ուղեղի միակողմանի զարգացման դէմ, պէտք է իր ծրագրի մէջ մտցնի նաև այնպիսի զբաղմունքներ, որոնք նպաստէին ուղեղի աջ կիսագնտի զարգացմանը:

Հետևաբար, դպրոցում իրենց պատուաւոր տեղը պիտի ունենան ձեռարւեստները և ֆիզիքական աշխատանքը, նամանաւանդ այնպիսի աշխատանքները, որոնք պահանջում են ձախ ձեռքի զործուցելութիւնը, որովհետև ձախ ձեռքի ամբողջ ղեկավարու-

թիւնը կախուած է ուղեղի աջ կիսագնտից<sup>1)</sup>:

Հարկաւոր է, ուրեմն, կազմել դպրոցական նոր ծրագիր, օգտւելով ուղեղի բնախօսութեան տւած արժէքաւոր ցուցմունքներէից, որովհետեւ հինը անպէտք է և միանգամայն վնասակար: Հին ծրագիրը թերութիւններ շատ ունի. բայց նրանց մէջ ամենից գլխաւորն է այն, որ նա, այդ ծրագիրը, ուղեղի մի կիսագունտը չափից աւելի աշխատեցնելով ու յոգնեցնելով, միւսը թողնում է բոլորովին անգործ և հետևապէս—անզարգացած: Մեր դպրոցում աւանդուող գլխաւոր առարկաները են՝ կրօնը, լեզուները և համբանքը. կրօնի դասին յաջորդում է գրութիւնը, գրութեանը՝ կարգալը, կարգալուն՝ համբանքը, համբանքին՝ նորից կրօնը, կրօնին՝ նորից գրութիւնը և այդպէս անվերջ. իսկ այդ ամենը—ինչպէս արդէն տեսանք—չափից աւելի աշխատեցնում է ուղեղի միայն ձախ կիսագունտը՝ ի վնաս աջի:

Որ ձեռների, ինչպէս նաև մարմնի միւս գործարանների զարգացումն ահագին ազդեցութիւն ունի մարդու հոգեկան կարողութիւնների վրայ—դա կասկածից դուրս է: Դրա համար շատ անհերքելի փաստեր է տալիս մեզ բժշկական մանկավարժութիւնը: Օրինակ, կակազների, նաև այնպիսի երեխաների, որոնց կամ լեզական կենտրոնն է հիւանդ և կամ հաղորդիչ նեարդերը—վերաբերմամբ կատարւած փորձերը ցոյց են տալիս, որ նրանց այդ արատներն ուղղելու գործում, համապատասխան վարժութիւնների գործադրութեամբ, փայլուն հետևանքների կարելի է հասնել:

Յօգուտ ֆիզիքական աշխատանքների բերած վերոյիշեալ բոլոր փաստերը գալիս են մեզ համոզելու, որ մենք փոխենք դէպի ձեռարկեսաներն ունեցած մեր անարդար վերաբերմունքը և մանուկների դաստիարակութեան խնդրում—նամանաւանդ զըսորոցական առաջին տարիներում—հարկաւոր տեղը տանք նրանց:

### Յ. Տ. Յակովբեանց.

1) Երազնութեան, բնագիտութեան եւ մարմնամարզութեան դասերը նոյնպէս նպաստում են ուղեղի աջ կիսագնտի զարգացման: